«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ուսուցման ժամանակակից մեթոդների և ՏՀՏ-ների կիրառությունը գերմաներենի դասավանդման ընթացքում

ՀԵՂԻՆԱԿ Երվանդյան Ստելլա

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ «Գերմաներեն»

ՂԵԿԱՎԱՐ Զ. Հակոբյան

ՍԵՎԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն.....2

Ներածություն.....3

Տեսական մաս

1.Գերմաներեն առարկայի ուսուցման ընթացքում ժամանակակից մեթոդների և ՏՀՏ-ների կիրառման հրամայականները.....5

Գործնական մաս

2. Մանկավարժական մեր փորձից.....12

Եզրակացություններ.....17

Օգտագործված գրականության ցանկ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացումը, կյանքի նոր ռիթմը իրենց հետ բերել են բազմաթիվ նորարարություններ, որոնք մուտք են գործում նաև հանրակրթական համակարգ: Ոչ միայն մանկավարժական աշխատողներն են զինվում համապատասխան նոր մեթոդամանկավարժական գիտելիքներով ու գործիքներով, այլն նաև անհրաժեշտություն է առաջացել՝ վերաձևակերպելու սովորողների դերը դասի ընթացքում՝ կարևորելով սովորողակենտրոն ուսուցման մոդելը: Բարփոխումներով պայմանավորված՝ վերարժեվորվել են նաև բոլոր ուսումնական առարկաների դասավանդման նպատակներն ու վերջնարդյունքները՝ մեծ նշանակություն տալով սովորողների մեջ առանցքային կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը:Նշված բարեփոխումներն ազդել են նաև օտար լեզուների դասավանդման վրա:

Հանրակրթական դպրոցում օտար լեզվի դասավանդումը մեծ նշանակություն ունի սովորողների համար: Լեզվական գիտելիքների, հաղորդակցական հմտությունների ձեռքբերման և լեզվամտածողության ձևավորման հետ միասին օտար լեզուների ուսուցումը խթանում է սովորողների մշակութային կարողունակության զարգացմանը, ծանոթացնում այլ ազգերի կենցաղին ու սովորույթներին՝ մեծացնելով սովորողների մտահորիզոնն ու ճանաչողությունը: Ուրախալի է, որ ժամանակակից սովորողները բարձր են գնահատում օտար լեզվի իմացության դերը, նրանց համար շոշափելի հաղթանակ է օտար լեզվով ազատ հաղորդակցվելու կարողությունը, սակայն սովորողների համար բավականին դժվար է առաջընթաց ունենալ, երբ ուսուցիչը դասը վարում է ուսուցման ավանդական մեթոդներով, որտեղ սովորողը հիմնականում պասիվ լսողի դերում է, մինչդեռ լեզու սովորելու կարևոր նախապայմանն ակտիվ հաղորդակցական միջավայրի ապահովումն է: Կարևոր է նաև դասին ՏՀՏ գործիքների կիրառությունը, ինչը նույնպես առավել դյուրին է դարձնում ուսումնական գործընթացը, հագեցնում այն տարաբնույթ հետաքրքիր բաղադրիչներով:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ նորարարություններով պայմանավորված կրթական բարենպաստ ու աջակցող միջավայրի ստեղծումը սովորողի համար

կարող է ապահովել այնպիսի հնարավորություններ, որտեղ արդյունավետորեն կարելի է իրականացնել օտար լեզվի դասավանդումը՝կիրառելի դարձնելով այն:

<u>Հետազոտության թեմայի արդիականությունը:</u> Պայմանավորված հանրակրթական համակարգի ներկայիս բարեփոխումներով՝ կարևոր ենք համարում ուսուցչի կողմից ուսուցման կարողունակահեն մոդելին ընդառաջ գնալու հանգամանքը, ինչը կարող է նպաստել դասապրոցեսի արդյունավետության բարձրացմանը և խթանել սովորողների առաջադիմությունն ու աշխատունակությունը: Այս համատեքստում բացառություն չէ նաև գերմաներենի դասագործընթացը: Հենց այս հանգամանքի անհրաժեշտության կարևորմամբ էլ պայմանավորել ենք հետազոտության թեմայի արդիականությունն ու հրատապությունը:

<u>Հետազոտության նպատակը:</u> Հետազոտության նպատակն է շեշտադրել ակտիվ ու աշակերտակենտրոն դասի դերը սովորողների՝ օտար լեզուն առավել հեշտ սովորելու կարողության զարգացման գործում, ինչպես նաև ցույց տալ գերմաներենի դասավանդման շրջանակներում ուսուցչի դերը վերը թվարկված վերջնարդյունքին հասնելու հարցում:

<u>Հետազոտության խնդիրները</u>.

- Դիտարկել աշակերտակենտրոն ուսուցման ընթացքում սովորողների խոսքային կարողության, ինքնուրույնության զարգացման մանկավարժական պայմանները:
- Վեր հանել գերմաներենի դասն առավել ակտիվ ու մասնակցային դարձնելուն ուղղված մանկավարժական մոտեցումները:
- Դիտարկել կարողունակահեն կրթության առանձնահատկությունները՝ գերմաներենի ուսուցման օրինակով:

<u>Հետազոտության ընթացքում գործադրված մեթոդները՝</u>

1. Գիտամեթոդական գրականության, կրթության բնագավառի իրավական ակտերի ուսումնասիրություն և վերլուծություն
2. Դիտարկումներ, փորձարարական օրվա դասի պլանավորում, արդյունքների վերլուծություն, ամփոփում:

<u>Ուսումնասիրության նորույթը</u> պայմանավորված է «Գերմաներեն» ուսումնական առարկայի շրջանակներում համագործակցային ուսուցման մեթոդական կառույցի բազմազանությանն ու արդյունավետությանը միտված մոտեցումների մշակմամբ:

Տեսական մաս

1.Գերմաներեն առարկայի ուսուցման ընթացքում ժամանակակից մեթոդների և ՏՀՏ-ների կիրառման հրամայականները

Յուրաքանչյուր օտար լեզու արտացոլում է իր լեզվակիր ժողովրդի մշակույթը, լեզվամտածողությունը, հանդիսանում է այլ ժողովուրդներին սեփական մշակույթը փոխանցելու, հասանելի դարձնելու միջոց, նպաստում է միջմշակութային դրական հարաբերությունների ձևավորմանը: Այս համատեքստում նախընտրելի է, որ օտար լեզուների ուսուցումը սկսվի հենց հանրակրթական դպրոցից՝ առավել նկատելի արդյունքներ ունենալու նկատառումներից ելնելով: Օտար լեզուներին տիրապետելը բարձրացնում է դպրոցականների հումանիտար կրթության մակարդակը, էապես խթանում է անհատականության ձևավորմանն ու սոցիալիզացիային, հետաքրքրություն ե է առաջացնում բազմալեզու աշխարհի նկատմամբ, ուստի սովորողներին մոտիվացնել, շահագրգռելը այս համատեքստում հեռահար նպատակներ է հետապնդում: Օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը, լեզվական կարողունակությունը: Սովորելով օտար լեզու՝ դպրոցականները նախնական պատկերացումներ են ձեռք բերում տվյալ լեզվի մասին, ըմբռնում որոշ առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում է մայրենի լեզվից, ինչը նպաստում է սովորողների ինչպես բանասիրական մտահորիզոնի ընդլայնմանը, այնպես էլ մայրենի լեզուն ավելի լավ հասկանալուն:

Բացի այդ, օտար լեզվով շփումը կարգավորում է անհատի վարքը, խթանում այս կամ այն խոսքային գործունեությունը, համագործակցությունը: Այն նպաստում է անձնավորության արժեքային կողմնորոշիչների, հայացքների և համոզմունքների ձևավորմանը, ծառայում է սովորողի վարքի և փոխհարաբերությունների, խոսքային կարողությունների զարգացմանը, ինչը դրսևորում է խոսքային էթիկայի նորմերի պահպանման միջոցով[1]: Միևնույն ժամանակ օտար լեզվի տիրապետումը նպաստում է սովորողների համակողմանի զարգացմանը, ինտեգրված ուսուցման

[1] Գիտամեթոդական հանդես, Օտար լեզուները Հայաստանում, էջ 9:

համար ստեղծում է նպաստավոր պայմաններ՝ նպաստելով աշխարհագրությունից, պատմությունից, գրականությունից սովորողների կոնկրետ պատկերացումների հարստացմանը: Հենց սրանում է դրսևորվում լեզվական ուսումնական առարկաների փոխազդեցությունը, ինչը նպաստում է դպրոցականների լեզվաբանական կրթության հիմունքների ձևավորմանը:

Այս տրամաբանության մեջ մեր երկրի հանրակրթական համակարգում իր կարևոր տեղն ու դիրքն ունի «Գերմաներեն» ուսումնական առարկան: Գերմաներենը Եվրոպական Միության 24 լեզուներից մեկն է և անգլերենի ու ֆրանսերենի հետ մեկտեղ՝ նաև հանդիսանում է ԵՄ աշխատանքային լեզու: Աշխարհի մի շարք երկրներում անգլերենի կողքին գերմաներել լեզվի իմացությունը խրախուսելի է, ուստի այս լեզվի ուսումնասիրություն հետագայում մեծ հորիզոններ կարող է բացել այսօրվա սովորողների համար: Հենց այս հանգամանքով պայմանավորված՝ ուսուցիչն ամեն կերպ պետք է մոտիվացնի սովորողներին ու տա առարկան կարևորելու նախադրյալներ: Այս համատեքստում կցանկանանք շեշտը դնել ուսուցչի կողմից դասը վարելու հմտությունների վրա, քանի որ սովորողը հետաքրքրվում է ուսումնական առարկայով այն դեպքում, երբ դասապրոցեսի մեջ գտնում է հետաքրքրություններ, դասը դինամիկ է, ակտիվ, սովորողի մասնակցելիությունը՝ բարձր:

Կրթական բարեփոխումների տրամաբանության մեջ անհրաժեշտություն առաջանում, որ ուսուցիչը դասը պլանավորի ուսուցման ժամանակակից մեթոդներով, հաճախ կիրառի ՏՀՏ գործիքներ, որպեսզի կարողանա հետաքրքրել ու ոգևորել սովորողներին: Մեր մանկավարժական փորձից կարող ենք պնդել, որ ավանդական մետեցումներով անցկացվող դասը ժամանակակից սովորողների համար միօրինակ ու ձանձրալի է, միայն ուսուցչի բացատրական աշխատանքը ոչ մի էական ազդեցություն չի ունենում սովորողի խոսքայի կարողության զարգացման, բառապաշարի հարստացման վրա: Իսկ օտար լեզուն պահանջում է անընդհատ գործածություն, ինչը կարող է ապահովվել հենց ժամանակակից տեխնոլոգիաների կիրառությամբ դասերի ընթացքում: Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ «Մանկավարժական աշխատողը պարտավոր է նպաստել ուսումնական հաստատությունում սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով

համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրականացնել հանրակրթական ծրագրերը»[2]:

Այս տեսանկյունից լեզուների ուսուցման ընթացքում բավականաչափ արդյունավետ է կիրառել ուսուցման համագործակցային մեթոդները: Այս մեթոդները հնարավորություն են ստեղծում, որպեսզի սովորողները կարողանան միասին սովորել, համագործակցել, կատարել որևէ աշխատանք, որի ընթացքում կա թիմային մոտեցում, ինչն էլ նպաստում է, որ ետ մնացող սովորողները նույնպես ակտիվ մասնակցեն դասին: Համագործակցային ուսուցման իրականացումը օտար լեզվի ուսուցման ժամանակ նպաստում է ուսուցման արդյունավետությանը, մեծացնում է սովորողների անհատական լեզվական կարողությունները, ճանաչողությունը: Այն լավագույն միջոցներից մեկն է ուսուցման նպատակներին և արդյունքներին հասնելու համար: Այս իրավիճակում ուսուցիչը դադարում է գիտելիքների հաղորդման միակ աղբյուրը լինելուց[3]: Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար: Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին[4]:

Կարելի է պնդել, որ համագործակցային մեթոդներով պլանավոված դասն ամբողջովին համընկնում է կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի տրամաբանությանը. «Ավանդական դասի ընթացքում գործում է ուսուցիչ-աշակերտ կապը, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին՝ նաև աշակերտ-աշակերտ կապը»[5]: Այստեղ ուսուցիչը հադես է գալիս ուղղորդողի, կողմնորոշողի, համակարգողի դերում, իսկ սովորողը դասագործընթացի կենտրոնական սուբյեկտն է, ով հետազոտում է, տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրում տեղեկություններ, համակարգում դրանք, գիտելիքները դնում գործնական

[2] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27:
[3] Ապրեսյան Մ., Գյուլզատյան Դ., Տեր-Սարգսյան Լ. Օտար լեզուների դասավանդման հայեցակարգային չափորոշիչներ, Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար N4(13) Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան 2016:
[4] Գ. Հովհաննիսյան, Ա. Զոհրաբյան , Ա. Արնաուդյան, Ք. Գրիգորյան, Մ. Դավթյան, Ի Օհանովա, «Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները», Երևան, 2004, էջ 145:
[5] «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020»:

կիրառության մեջ՝ հնարավորություն ունենալով այդ ամենը կատարել նաև թիմային աշխատանքի միջոցով:

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների ու դասավանդման մեթոդների մասին շատ է խոսվում մանկավարժական համայնքում, դրանց շուրջ իրականացվում են լայնածավալ իրազեկողական աշխատանքներ, վերապատրաստումներ: Սակայն դեռ կան բազմաթիվ ուսուցիչներ, ովքեր դժվարություններ ունեն մեթոդի ընտրության, տեղայնացման հարցում: Այստեղ, կարծում ենք, դեռ անելիքներ կան, քանի որ ուսուցիչը պետք է հասկանա, որ մեթոդը պիտի ծառայի՝ ուսումնական նյութն առավել դյուրին դարձնելուն, դրա օգտագործումը չպետք է լինի ինքնանպատակ, այլ ունենա կոնկրետ նպատակներ՝ կոնկրետ խնդիրներ լուծելու համար: Միայն այդ դեպքում ընտրված մեթոդական շղթան կարելի է արդյունավետ համարել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը[6]:

Մեթոդներն ու հնարները դասապրոցեսում այնպես սահուն պետք է օգտագործվեն, որ դրանք դառնա դասի միսն ու արյունը, սովորողներին ոգևորելու գործիքները: Նման դեպքում ուսուցիչը կարող է խնայել ժամանակ, ապահովել սովորողների համաչափ մասնակցելիությունը դասին, կիրառել շերտավորված ուսուցում՝ հաշվի նստելով յուրաքանչյուր սովորողի կարիքների հետ. «Մանկավարժական աշխատողը պարտավոր է նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները»[7]:

Կցանկանայինք խոսել նաև ՏՀՏ գործիքների կարևորության մասին, որոնք արդի փուլում ուղղակի օրապահանջ են: Ժամանակակից աշխարհը թևակոխել է տեղեկատվական հասարակության զարգացման որակապես նոր փուլ, ինչը հանգեցրել է հասարակության կյանքի որակի արմատական փոփոխությունների: Համակարգչայնացումը դարձել է մեր հասարակության անբաժան մասը՝ իր հետ

[6] https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ 22:

[7] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 2.2:

բերելով նաև մի շարք բացասական երևույթներ, որոնց թիրախում են նաև դպրոցականները: Վերջինը հատկապես վերաբերում է համակարգչային կախվածությանը: Ակնհայտ է, որ այսօր սովորողներից շատերի մոտ մարել է հետաքրքրությունը ուսման նկատմամբ, նրանցից շատերի համար դպրոց գնալն ու դաս սովորելը դարձել է անհետաքրքիր: Այս ամենը կանխելու և տեխնոլոգիական հնարավորություններն ի շահ դպրոցականների օգտագործելու համար,կարծում ենք, որ դասի ընթացքը պետք է լինի ակտիվ, աշակերտակենտրոն, հագեցած նոր տեխնոլոգիաներով, որպեսզի սովորողն այստեղ գտնի իր հետաքրքրություններն ու բավարարի շփվելու, խոսելու արտահայտվելու իր պահանջմունքը: Այս պարագայում սովորողների հետաքրքրությունների ուսումնասիրությունը, ժամանակին ստեղծված հետադարձ կապը թույլ կտա հստակեցնել սովորողի համար գերակա արժեքներն ու կողմնորոշել դրանք դեպի բնականոն զարգացում: Ուսուցիչը պետք է համացանցը ճիշտ օգտագործելու համար՝սովորողներին ուղղորդի նախագծերի կամ սոցիալական աշխատանքների ստեղծման ուղղությամբ, որոնք ներբեռնելով համացանց՝ կհամախմբեն այլ մարդկանց՝ դրական նպատակների և գործողությունների իրականացման համար[8]:

Ուսուցիչը, պայմանավորված տեղեկատվական հոսքրի ակտիվությամբ, ունի նաև այլ տեսակի առաքելություն: Պետք է անպայման սովորողին փորձել զերծ պահել վտանգավոր ու կործանիչ համացանցային հարթակներից՝ շատ դեպքերում ուղիղ ցույց տալով դրանց վնասակար ազդեցությունները մարդու կյանքի, անվտանգության վրա: Ուսուցիչը պետք է սովորողներին ուղղորդի կիբեռհետապնդման դեպքում՝ ապաակտիվացնել և փակել տվյալ սպառնացող աղբյուրի հետ հաղորդակցման աղբյուրը[9]:

ՏՀՏ-ի մուտքը կրթական ոլորտ քիչ-քիչ փոխեց ավանդական պատկերացումները կրթության ու զարգացման մասին: Կարող ենք ասել, որ կրթության ոլորտում այդ միջոցների օգտագործումը կարող է շատ լավ արդյունքներ ունենալ: Շատ գործիքներ կան, որոնք դյուրացնում են ուսումնառության գործընթացը ՝ հեշտացնելով ուսուցչի աշխատանքն ու ապահովելով դասի պատկերավոր ու նկարագրական լինելը: Տարատեսակ առցանց գործիքների, սահիկաշարերի միջոցով ուսուցումն ապահովում է դասի զննականությունը, ինչը հատկապես կարևոր է օտար լեզվի ուսուցման ժամանակ: Մի բան պարզ է, այս

[8] https://old-lib.armedu.am/resource/27157 Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան:
[9] https://old-lib.armedu.am/resource/27157 Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան:

ամենը հետաքրքիր է մերօրյա սովորողներին, քանի որ դասի մեջ կա դինամիկա: Ավելի արդյունավետ է ՏՀՏ գործիքների համադրումը համագործակցային մեթոդների հետ: Այս պարագայում սովորողը ամբողջապես իր ափսեի մեջ է: ՏՀՏ- ի կիրառման միջոցով դպրոցականը դառնում է ակտիվ մասնակիցը ուսուցման գործընթացում, իսկ ուսուցիչը՝ հանդես է գալիս որպես օգնական, խորհրդատու, խրախուսում անհատականությունը, ինքնատիպությունը, նախաձեռնությունն ու անկախությունը: Նյութի մատուցումը ՏՀՏ տեխնոլոգիաների միջոցով ավելի էմոցիոնալ, մատչելի և գրավիչ է դարձնում նյութը, իսկ աշակերտին տալիս է կառավարելու և ինքնակառավարվելու հնտություն: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ուսումնական գործընթացում լրացուցիչ հնարավորություն է սովորողների ուսուցման որակը բարելավելու համար: Այդ տեխնոլոգիաները և կրթական առցանց հարթակները կարող են ուսուցչին օգնել ավելի արդյունավետ լուծել հետևյալ խնդիրները.

•սովորողների ինքնուրույնության խթանում, աջակցություն նրանց անհատականության զարգացմանը,
•անհրաժեշտության դեպքում հեռավար կրթության կազմակերպում,
•սովորողների կրթական կարիքների առավելագույն բավարարում,
•գիտելիքի անկախ ձեռքբերման և փոխանցման գործընթացի արդյունավետության բարձրացում,
•սովորողների ՏՀՏ կարողությունների ձևավորում,
•ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի օգտագործման տեխնոլոգիաների կատարելագործում,
•սովորողների պատկերավոր մտածողության զարգացում,
•մեդիագրագիտություն, համացանցից օգտվելու կանոնների յուրացում:

Այսպիսով, ՏՀՏ-ի կիրառումը ուսուցման գործընթացում կարող է նպաստել տեսական մտածողության զարգացմանը և բարելավել կրթական գործընթացի արդյունավետությունը: Միևնույն ժամանակ՝ սովորողը պետք է անպայման վերահսկվի այս հարթակում գործունեություն ծավալելիս: Մեծերի գերխնդիրն է

ապահովել այնպիսի բարոյահոգեբանական միջավայր, որպեսզի սովորողն անկաշկանդ կիսվի իր հետաքրքրություններով, չգնա ծածուկ քայլերի, որոնք կարող են անդառնալի հետևանքներ առաջացնել:

ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսում

- Ուժեղացնում է աշակերտների մոտիվացիան
- Հնարավորություն է տալիս օգտագործել թարմ ինֆորմացիա
- Իրականացնել երկխոսություն ինֆորմացիայի աղբյուրի հետ
- Խնայել ժամանակը
- Հնարավորություն է տալիս լսարանային կամ անհատական պարապմունքները դարձնել ավելի հետաքրքիր
- Ուսուցչին տալիս է տեխնոլոգիական մեծ պահուստ

Կարող ենք պնդել, որ ուսուցչի գերխնդիրն է՝ կարողանալ սովորողներին ներգրավել տեխնոլոգիաների միջոցով տեղեկատվությունն ինքնուրույն որոնելու, վերլուծելու, համակարգելու, որը կօգնի նրանց մոտ զարգացնել ինքնուրույն, ստեղծագործական, վերլուծական մտածողությունը: Ուսուցչի դերն այստեղ ուղղորդելն է, ճիշտ ճանապարհ ցույց տալը և աշակերտներին կողմնորոշելը ինֆորմացիայի գլխապտույտ հոսքում: Սովորողները կարող են նաև ինքնուրույն ստեղծել օրվա դասի թեմային վերաբերող ցուցադրական նյութեր, ինչը կօգնի նրանց ավելի լավ յուրացնել տվյալ թեման, համակարգել ստացած գիտելիքները, ինչպես նաև կզարգացնի ստեղծագործական միտքը:

Այսպիսով, պատկերավոր ու դինամիկ դասերը պետք է ուսուցչի համար լինեն գործիքներ՝ սովորողներին գերմաներեն լեզվի գեղեցկությունն ու կարևորությունը ցույց տալու, որպես ուսումնական առարկա դրա դերը կարևորելու և հիմնարար գիտելիքներով զինելու առումով:

Գործնական մաս

2. Մանկավարժական մեր փորձից

Տեսական մասում մեր կատարած պնդումները կիիմնավորենք դասի օրինակով,: Դասը պլանավորել ենք ուսուցման համագործակցային մեթոդներով, կիրառել ենք նաև ՏՀՏ գործիքներ:

Առարկան	Գերմաներեն
Դասարանը	`4-րդ
Դասի թեման	«Տարվա եղանակները»
Դասի տիպը	Ամփոփման, գիտելիքների ստուգման դաս
Դասի նպատակները	1.Աշակերտը պետք է իմանա տարվա եղանակները, ամիսները, գույները, տարվա եղանակներին բնորոշ հագուստների անվանումները, մրգերի ու բանջարեղենների անվանումները՝ համապատասխան տարվա եղանակներին: 2.Աշակերտը պետք է կարողանա սահուն և հասկանալով ընթերցել բնագիրը, մեկնաբանել ընթերցածի բովանդակությունը, վերարտադրել բնագիրը, աշխատանքի ընթացքում դրսևորել ստեղծագործականություն: 3.Աշակերտը պետք է կարողանա վերաբերմունք արտահայտել բնության

	պահպանման մասին, իմանա՝ որ եղանակին ինչ հագուստ է հարկավոր կրել, գնահատի բնության դերը մարդու կյանքում:
Դասի կահավորումը	❖ ցուցապաստառ ❖ տարվա եղանակների նկարները ❖ Համակարգիչ, պրոեկտոր
Միջառարկայական կապեր՝	❖ Երաժշտություն՝ Ա. Վիվալդի «Տարվա եղանակներ»:
Կիրառվող մեթոդներ և հնարներ	• «Վեննի դիագրամ: • «Քառաբաժան» «Մտագրոհ» • «Տ-աձև աղյուսակ» • «ԳՈՒՍ»

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Վեննի դիագրամ մեթոդի օգնությամբ սովորողները հաջորդաբար ներկայացրեցին տարվա եղանակներն ու դրանց ամիսները, ապա բանավոր հատկանշավորեցին ամեն մի եղանակը՝ բանալի բառերը գրելով Տ-աձև աղյուսակում:



Այնուհետև սովորողները ընթերցեցին բնագիրն ու խմբային եղանակով կատարեցին բանալի բառերի ձևաբանական վերլուծություն: Դասարանը բաժանվեց 4 խմբի: Խմբերից յուրաքանչյուրին հանձնարարվեց թեմայի շուրջ գրել փոքրիկ նկարագրական տեքստ, ապա յուրաքանչյուր խմբի տրվեց հարցադրում `

Ի՞նչ իմացանք	Ի՞նչ պարզեցինք
Ի՞նչ գիտեինք	Ձեր կարծիքը

Հիմնվելով տեքստի բովանդակության վրա՝ սովորողները պատասխանեցին տրված հարցերին: Աշխատանքի իրականացման ընթացքում հարցադրմանը պատասխանեցին բոլոր սովորողները, ինչպես նաև հնարավորություն ունեցան փոխադարձ հարցադրումներ կատարել:

1. **Ո՞րն է ձմռանը բնորոշ գույնը:**
2. **Ի՞նչ մրգեր գիտես, որոնք հասունանում են աշնանը:**
3. **Ո՞ր տոնին ես սպասում դեկտեմբեր ամսին:**
4. **Ինչպե՞ս ես անցկացնում ամառային արձակուրդդ:**
5. **Ո՞րն է գարնան առաջին ամիսը:**

Հաջորդիվ սովորողները կատարեցին գործնական աշխատանք՝ խմբային եղանակով: Կազմված 4 խմբերից յուրաքանչյուրին հանձնարարվեց մեկ տարվա եղանակ, որի վերաբերյալ հարկավոր է գրել բանալի բառեր՝ գույներ, հագուստներ, եղանակային երևույթներ, մրգերի ու բանջարեղենների անուններ, որոնք բնորոշ են տարվա այդ եղանակին:

Յուրաքանչյուր խմբից մեկն ամփոփեց իր խմբի աշխաատանքը: Գործնական աշխատանքից հետո իրականացվեց միջառարկայական դադար. սովորողներն ունկնդրեցին Ա. Վիվալդի «Տարվա եղանակներ» ստեղծագործությունից հատված:

Տարվա ամիսները սովորողները սովորեցին հետաքրքիր խաղային մեթոդով: Փոքրիկ տուփից ամեն մի սովորող հանեց տարվա որևէ ամիս դնելով համապատասխան եղանակի կողքին: Սովորողները հնարավորություն ունեցան ուղղել իրար, ինչը նույնպես համագործակցության հետքրքիր օրինակ է:

Հաջորդիվ սովորողներին ցուցադրվեց տեսասահիկ, որի շուրջ վերջիններս պետք է կազմեին նախադասություններ: Այս առաջադրանքն օգնեց, որ զարգանա սովորողներ ստեղծագործական մտածողությունը

Դասի ավարտին կիրառվեց ԳՈՒՍ հնարը՝ «գիտեի, ուզում էի իմանալ, սովորեցի»: Սովորողներն իրականացրեցին փոխադարձ գնահատում, տրվեց տնային հանձնարարություն:

Այսպիսով, հաջորդ դասի հարցման ընթացքում պարզ դարձավ, որ սովորողների գերակշիռ մասը կարողանում է դասի հիմնական հասկացությունները մեկնաբանել, գիտի անծանոթ բառերի նշանակությունը, կարող է ինքնուրույն գործածել նախադասությունների մեջ: Խոսքը կշռադատված է, չկա մեխանիկական վերարտադրություն: Կարծում ենք, որ այն վերջնարդյունքը, որն ակնկալում էինք ունենալ, ստացանք, քանի որ կարողացանք ապահովել սովորողների համաչափ մասնակցությունը դասին, թույլ տվեցինք, որ նրանք համագործակցեն, խմբերում ունենան ինքնուրույնություն, ստեղծագործեն ու հանդես գան նախաձեռնողի դերում: Ի հակադրություն նշվածի՝ նկատենք, որ աշակերտակենտրոն ուսուցման արդյունքում ուսումնական նյութն առավել պակաս չափով է յուրացվում, սովորողն ինքնուրույն գործելու, ստեղծագործելու հնարավորություն ավելի քիչ է ունենում, քանի որ շեշտը դրվում է բացատրական աշխատանքների և ֆրոնտալ հարցման վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր հետազոտության թեման անսպառ ուսումնասիրության և վերլուծության երկարատև աշխատանք է պահանջում, այնուամենայնիվ մի բան հստակ է, եթե գերմաներենի դասավանդման ընթացքում ուսուցիչը հիմնական գիտելիքների հաղորդմանը զուգահեռ նպատակ է դնում զարգացնել սովորողի ստեղծագործականությունը, ինքնուրույն գործելու ու նախաձեռնողական քայլեր կատարելու կարողությունը, ապա հարկավոր է դուրս գալ ուսուցչակենտրոն կրթական միջավայրից՝ նախապատվություն տալով սովորողակենտրոնին: Այստեղ նպատակահարմար է կիրառել ուսուցման ժամանակակից մեթոդներ, ՏՀՏ գործիքներ, որոնք կարող են մոտիվացնել ու ոգևորել սովորողներին:

Սովորողի հետ հաշվի նստել, լսել նրա կարծիքը, խրախուսել վերջինիս, ստուգման ընթացքում շեշտադրել ոչ թե սխալ, այլ ճիշտ բաղադրիչը, կարծում ենք, որ նման մոտեցումը սովորողին ու դասարանը կդարձնեն հեշտ կառավարելի, և ուսուցիչն անպատճառ կհասնի հաջողության:

Նկատենք, որ կարևոր հանգամանք է նաև դասարանում ձևավորված բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը, ինչը թույլ կտա, որ սովորողը հնարավորինս արագ ինտեգրվի, նախաձեռնողի դերում լինի, ցանկանա սովորել ու իր սովորածը կիրառել, հետաքրքրվի առարկայով:

Կցանկանայինք վերահաստատել նաև ուսուցչի աշխատանքի ընթացքում վերջինիս ընտրած մեթոդական եղանակների ու առհասարակ դասի տեսակների կարևոր նշանակությունը դրական ու խոստումնալից վերջնարդյունք ապահովելու առումով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գիտամեթոդական հանդես, Օտար լեզուները Հայաստանում, էջ 9:
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27:
3. Ապրեսյան Մ., Գյուլզատյան Դ., Տեր-Սարգսյան Լ. Օտար լեզուների դասավանդման հայեցակարգային չափորոշիչներ, Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար N4(13) Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան 2016:
4. Գ. Հովհաննիսյան, Ա. Զոհրաբյան , Ա. Արնաուդյան, Ք. Գրիգորյան, Մ. Դավթյան, Ի Օհանովա, «Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները», Երևան, 2004, էջ 145:
5. «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020»:
6. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdfՈւսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ 22:
7. https://old-lib.armedu.am/resource/27157 Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան: